ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

# ՈՐՈՇՈՒՄ N68

31 հունվարի 2020 թվականի

## «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՏՆՕՐԵՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին ՀՀ օրենքի Հոդված 15-ի 6-րդ կետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 8-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 8-րդ ենթակետով՝ ԵՊՀ հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի տնօրենի թափուր պաշտոնի համար հայտարարել բաց մրցույթ:
2. Հոգաբարձուների խորհրդի քարտուղարին հանձնարարել ԵՊՀ ԻՄ տնօրենի ընտրության կանոնակարգով սահմանված կարգով և ժամկետներում ապահովել մրցույթի անցկացման մասին հայտարարության հրապարակման, թեկնածուների հայտերի և անհրաժեշտ փաստաթղթերի ընդունման գործընթացը:
3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի տնօրենի ընտրությունն անցկացնել 2020թ. մարտի 16-ին:

**Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝ Գ. Ա. Մուրադյան**